

ԱՐՏԱԿԱՐԳ ՈՒՂԵՐՁ. ԲՈԼՈՐ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ՏՈՒԺԵԼ ԵՆ ՀՀ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՊՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ԲԱՅՑ ՉԵՆ ԶՐԿՎԵԼ ՊԱՏՎԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

26.10.2013 12:54



Հարգելիներս, մեզանից յուրաքանչյուրն, ով անձնապես առնչվել է հայաստանյան դատաիրավական համակարգին, համոզվել է, որ հանրապետությունում տիրող արդարադատության լիակատար դեֆիցիտի պայմաններում՝ բացահայտորեն ծաղկում է անօրինականությունը: Այլ իրավիճակ չէր էլ կարող լինել, քանի որ պնակալեզության, ստորաքարշության, կաշառատվության և այլ արատավոր միջոցներով դատավարական իրավունքներ ու մարդկային ճակատագրեր տնօրինելու հնարավորություններ ճանկած «ճարպիկները» հանրապետության դատաիրավական համակարգի բոլոր հաստատությունները, վերևից՝ ներքև, վերածել են ծուռ հայելիների թագավորության անբարո շեղաբեկումով գործող խաբկանքի թատրոնների, որոնցում՝ արդարադատության պատրանքի ներքո, իրականացվում են սևը՝ սպիտակ, ծուռը՝ շիտակ, թացը՝ չոր, կամ լրիվ հակառակը ներկայացնող աճպարարություններ: Օբյեկտիվ իրականությունը նենգափոխելու կենտրոնակայանը և աճպարարության ակադեմիական դատաթատրոնը, անշուշտ, վճռաբեկ դատարանն է, լիիրավ խարդավողի բացառիկ մենաշնորհով օժտված գլխավոր դատառեժիսոր Արման Մկրտումյանի ղեկավարությամբ, ով նաև խաբեության դատադրամատուրգիայի շտեմարան-գրչանոցի վերակացուն է: Հենց նա է, որ, վերադասի հանձնարարականներն ու ֆինանսաշատ երևելիների պատվերները կատարելու միտումով՝ քրեական լեգենդի, և քաղաքացիական ու վարչական դրամայի գծով իր ասիստենտներ Դավիթ Ավետիսյանի ու Հենրիկ Խունդկարյանի դատապալատ-թատերախմբերում ընդգրկված՝ Վարդան Ավանեսյանի և Համլետ Ասատրյանի տիպի խամաճիկ դատավորների ստորագրություններով «օրինականացնում» է ստորադաս ատյանների վասալ նախագահների ու ճորտ դատավորիկների խաղացած ներկայացումներում առկա աճպարարությունների համար հենք դարձած սուտն ու կեղծիքը: Միևնույն ժամանակ, այդ երկու թատերախմբերն իրենց հովանավորյալներին մատուցելով մեծագույն ծառայություն՝ նրանց շահերին առնչվող բոլոր վճռաբեկ բողոքներն՝ առանց քննության, առանց իրավական հիմնավորման, բացահայտ անհոգի վերամբարձությամբ վերադարձնում են բողոքաբերներին, ինչով խախտում և ոտնահարում են՝ կայացված դատավճիռը՝ օրենքով սահմանված

կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման վերաբերյալ ՀՀ սահմանադրության 20-րդ հոդվածի երրորդ մասով սահմանված՝ քաղաքացու իրավունքը: Անպատժելիության ամբարտավան հոգեբանությամբ ներծծված այդ գործելաոճին վերջ տալու նպատակով՝ Փաստաբանների պալատի անդամները բազմիցս բարձրաձայնել են խնդրի արատավոր էությունը, որը «վերևներին» լսելի դարձնելու համար նույնիսկ գործադուլ (դատադուլ) են հայտարարել, սակայն, ինչպես ասում են՝ «ձայն բարբառ հանապատի» ... Այնուամենայնիվ, փաստաբանների գոյությունն ու գործունեությունը հակառակ իմաստով արժանացավ իշխանությունների «համարժեք» վերաբերմունքին: Այսպես. Արդարադատության նախարարությունը կառավարության միջոցով Ազգային ժողովում շրջանառության մեջ դրեց թերուսների հորինած մի օրինագիծ, որի գերխնդիրը փաստաբաններին հլու-հպատակի կարգավիճակով կամակատար դարձնելն է: Ուսյալները նման քայլի չէին դիմի: Որպես փաստաբան՝ ես կիսում եմ գործընկերներիս օրինական վրդովմունքը և կարծում եմ, որ պետության իրավական հիմքը խարխուղ այս «վայ պետականասերներին» դեպի «հեռու ճանապարհ» ուղարկելուց առաջ պետք է հնչեցնենք բուն ու երկարատև ծափահարություններ: Այդ պարագայում նրանք, իրենց նախակերպարի պես, թերևս, բացականչեն՝ «պետք չէ օվացիա, պարոնայք, պետք չէ»: Արդարադատությունը բնականոն հունից շեղող մեքենայություններին, ինչ խոսք, մասնակից են շատերը, որոնք առաջին հայացքից՝ խիստ տարբեր, բայց բուն էությունը՝ գրեթե նույնն են: Համադրենք միայն երկու «կարկառուն դատագործիչների»: Մեկը՝ այլևս նախկին գլխավոր դատախազ Ադվան Հովսեփյանն է, ով քողարկված ցինիզմով էր սանձավարում հետաքննության, նախաքննության, դատաքննության ու քրեակատարողական փուլերում ընթացող աճարարությունները և հմտությամբ էր կազմակերպում մեղքերի թողության վճարատոմսերի՝ ինդուլգենցիաների վաճառքը: Մյուս արժանահիշատակ «գործիչն» արդարադատության նախարարի պաշտոնն անլրջացրած Հրայր Թովմասյանն է, ով անթաքույց ելևէջումներով գուր փորձում է լծորդվել «աճարարների համքարությանը», նաև՝ ծաղրի առարկա դառնալով, ճգնում է անձամբ ուղղորդել արդարադատության պղծումների գործընթացը, սակայն հիմնականում խարխափելով՝ դեգերում է իր համար հատուկ մթնեցրած դատակուլիսներում: Պատահական չէ, ուրեմն, որ հայաստանյան դատաաճարարությունները, հանրության հեզանաքից ու արհամարհանքից զատ, պարբերաբար արժանանում են նաև Մարդու իրավունքների

Եվրոպական դատարանի բարոյամասնագիտական ապտակներին: Պատահական չէ նաև այն, որ հանցավոր աշխարհի ներքին օրենքները սրբորեն պահպանող ու լայն ընդգրկմամբ տարաբնույթ վեճերը հմտորեն լուծող քրեական հեղինակությունները՝ «օրենքով գողերը», ժողովրդի մոտ ավելի բարձր համարում ունեն, քան՝ իրենց անձնական պատասխանատվությամբ ու իրավագիտակցությամբ առանձնանալով՝ արդարադատություն իրականացնելու սահմանադրական առաքելությամբ օժտված դատավորներն ու նրանց ուղղորդող պետական պաշտոնյաները, ովքեր, ստի ու կեղծիքի ճանապարհը հարթելու համար, պետության օրենքներն օրինական կիրարկումից հանելով, կարդա՝ գողանալով, որպես օրենք գողացողներ՝ ինքնըստինքյան դառնում են «օրենքի գողեր» և պետության օրենքներին վերաբերվում են գողոնի պես... Չշփոթելու համար՝ փաստենք, որ «օրենքով գող» բառակապակցությունը՝ տվյալ միջավայրի համար՝ տիտղոս, պատվանուն է, իսկ «օրենքի գող» ասվածը՝ անտարակույս, արհամարհական պատժանուն է, որը կրող պաշտոնյաները նույնացվում են «մուլտիկներից» հայտնի՝ այն վարկաբեկված կենդանիների հետ, որոնք գանահարվելու պարագայում էլ անամոթաբար կրճոտում են վարժ հաչոցով փախցրած ոսկորը, կամ՝ ինքնամոռացությամբ ծամծմում են պատվիրված ձևով «պոչ խաղացնելու» և «անհրաժեշտ զոզոնց» արտաբերելու դիմաց «վաստակած» խոտի հավելյալ բաժինը: Այսքանով հանդերձ, նրանցից ոչ մեկը չի զլանում առիթ բաց չթողնելով՝ ձևանալ խղճի մարմնացում և օրենքի արձան: Դառն է, բայց՝ փաստ, որ հայաստանյան արդարադատությունը վերածվել է «կարիկատուրայի»: Այս բնութագրական բառը ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահինն է: Իր դժգոհությունը չի թաքցնում նաև Հանրապետության նախագահը, ով երբեմն-երբեմն հանրությանը լսելի դարձնելով՝ ամենավերջին վիրավորական խոսքերով խարազանում է դատաիրավական համակարգի աշխատողներին: Մասնավորապես, Գլխավոր դատախազությունում անցկացրած խորհրդակցության ժամանակ նա ասել է՝ «Հերիք չէ, որ քննությունը վարող պաշտոնյաները, գործի հանգամանքները պարզելու փոխարեն՝ կեղծիքների միջոցով փոխում են դեպքի փաստերը, դեռ հովանավորում են հանցագործներին և պարտակում հանցագործությունը: Ավելին՝ որոշ դեպքերում հանցագործությունը բարդում են ուրիշի վրա: Իրավապահ մարմնի աշխատողի կողմից ավելի ստոր և անբարոյական արարք, ես, ուղղակի, չեմ պատկերացնում»: Իսկ վճռաբեկ դատարանում նա

շեշտել է հետևյալը՝ «Արդարադատություն
իրականացնող անձի անպատժելիության
յուրաքանչյուր փաստ ինքնին արժեզրկում է և նրա
անկախությունը, և, բնականաբար, անաչառությունը:
Անհնար է հանրային վստահություն ակնկալել, եթե
իշխանության մի ամբողջ ճյուղ՝ իր
ենթակառուցվածքներով, թողնում է ինքնամփոփ և
մեկուսացած կառույցի տպավորություն, որն ապրում
և գործում է սեփական օրենքներով»:

Հանրապետության նախագահին առիթի դեպքում նաև
պատժում է քննիչներին, դատախազներին և
դատավորներին: Բայց հայտնի են դեպքեր, երբ
պատիժը տրվել է ոչ այն պատճառով, որ պատժվողը
քաղաքացիների իրավունքներն է ոտնահարել, այլ՝
այն, որ թերի են կատարել իջեցված հրահանգները:
Օրինակ. նախագահի հրամանագրով պաշտոնանկ
արված՝ Ավան և Նոր Նորք վարչական շրջանների
ընդհանուր իրավասության դատարանի դատավոր
Սամվել Մնացականյանի «մեղքը» եղել է լոկ այն, որ
նա՝ «վերևների» կամքին հակառակ, մեղադրյալի
նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը
փոխարինել է օրենքով նախատեսված
այլ ընտրանքով՝ գրավով: Եթե նկատի առնվի, որ
տվյալ մեղադրյալի նկատմամբ քրեական գործը
հետագայում այլ կազմով դատարանի կողմից
ընդհանրապես կարճվել է՝ արդարացման
հիմնավորումով, ապա ակնհայտ կդառնա, որ
դատավորին տրված պատիժը, մեղմ ասած, չի բխում
օրենքի պահանջից: Դրան հակառակ՝ անպատիժ են
մնում բացահայտ օրինախախտ դատավորները:
Այսպես. դատավոր Լ. Աթանյանը որպես օրինական
ապացույց է ճանաչել խոշտանգումով մեղադրյալից
վերցված ցուցմունքը, և իր կայացրած մեղադրական
դատավճիռը հիմնավորել է հետևյալ կերպ՝
«Դատարանը գտնում է, որ... հետաքննության
մարմնի կողմից մեղադրյալի հանդեպ բռնությունը
գործադրվել է ճշմարտությունը բացահայտելու
համար»: Ժամանակին ամբաստանյալի
պաշտպանները միջնորդություն էին արել՝
պահանջելով պատժել օրինազանց դատավորին,
սակայն նա թողնվել է անպատիժ՝ այն ստանդարտ
պատճառաբանությամբ, որ՝ «Դատավորն
արդարադատություն իրականացնելիս անկախ է և
ենթարկվում է միայն օրենքին»: Նույնիսկ այն բանից
հետո, երբ Եվրոպական դատարանն այդ գործով
վճիռ կայացրեց՝ ի վնաս Հայաստանի
Հանրապետության («Միշտ Հարությունյանն՝ ընդդեմ
Հայաստանի գործը»), որով Հայաստանը համարվեց
երկիր, որտեղ դատարանն արդարացնում է
մեղադրյալից ցուցմունքներ կորզելու՝ միջնադարյան
ինկվիզիցիայի մեթոդները, դատավոր Լ.Աթանյանին
ընդամենը տրվել է նկատողություն՝ թողնելով

պաշտոնում, իսկ Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների խամաճիկ դատավորները, ովքեր այդ արտառոց հետևությանը դատավճիռն` իրենց ստորագրություններով օրինականացնելով, թողել էին ուժի մեջ, որևէ պատասխանատվություն չեն կրել: Պակաս զավեշտալի չէ նաև մյուս օրինակը: Թիվ ԵԷԴ/0155/02/09 քաղաքացիական գործով, դատավոր Վ. Ասլանյանը 16.02.2012թ.-ի վճռով Հայաստան ներգաղթած միակողմանի ծնողագուրկ Խորեն և Գևորգ Խաչերյաններին ու նրանց մորը վտարել է իրենց հայրական տնից, սակայն բռնելով կեղծիքի ուղին, նա հայցվորին և պատասխանողին հատկացրել է` վճռի` 2-ական էջի ծավալով բովանդակափոխված տարբերակներ, ինչի հետևանքով` բողոք բերող կողմին, ըստ էության, գցել է թյուրիմացության մեջ` դրանից բխող անցանկալի դատավարական հետևանքներով: Աճպարարության վառ օրինակ հանդիսացող տվյալ վճիռն ավագ աճպարարների կողմից թողնվել է ուժի մեջ, իսկ սույն գեղծարար դատավորի արարքը համարվել է օրինաչափ... Փաստորեն, մի դեպքում` պատժվում է անմեղ դատավորը, իսկ մյուս պարագաներում` ներվում են պղծված համակարգի «մեծավորների» բարեհաճությանն այլևայլ միջոցներով արժանացած օրինազանցները, ովքեր` անպատժելիությամբ գոտեպնդված, շարունակում են ծածանել կեղծիքի դրոշմը: Ակնհայտ է, ուրեմն, որ դատաիրավական իշխանությունների հանդեպ եղած անվստահությունը հիմնագուրկ չէ: Ակնհայտ է նաև, որ այդ անվստահությունն այն էական պատճառներից է, եթե ոչ` գլխավորը, ինչը ստիպում է Հայաստանի քաղաքացիներին` զանգվածաբար լքել հայրենիքը: Այդ առումով հատկանշական է, որ հայրենի երկիրը հիասթափությամբ լքողի արարքը հոգեբանական զարգացման առումով գրեթե նույնական է, ինչ հուսաբեկված ինքնասպանի արարքը: Նույնական է նաև այն, որ գիտակցելով վախճանի անխուսափելիությունը` երկուսն էլ, վճռորոշ քայլին դիմելուց առաջ, կատարում են միջանկյալ քայլ. նախ` թքում են իրենց այդ վիճակին հասցնողի` տվյալ դեպքում, առավելապես` դատաիրավական համակարգ հորջորջվող կառույցի կողմը, ապա դրանից հետո` մեկը լքում է կյանքը, մյուսը` հայրենիքը: Դատաիշխանական ապօրինություններից տուժածներից մեկն էլ ես եմ, սակայն վերը հիշատակված միջանկյալ քայլը կատարելով հանդերձ` ո՛չ ինքնասպան կլինեմ, ո՛չ էլ մեր հրաշք երկիրը կլքեմ ու ասպատակության կթողնեմ այն ապաշնորհ ստահակներին, որոնց կերպարի չարենցյան բնութագիրն այս է` «Դեմքերը, ախ, բուժ են այնպես` կարծես շինված են տապարով»: Գիտակցելով, որ հարազատ երկրում

իրավունքներդ ոտնահարող, անծոյ վիրավորող ու համակարգը վարկաբեկող անօրենների նկատմամբ համարժեք վերաբերմունք չդրսևորել, թողնել անպատիժ և ապրել լույսայն՝ չի կարելի, դիմում եմ դատաիրավական համակարգի պղծություններից տուժած բոլոր պատվախնդիր քաղաքացիներին, որ յուրաքանչյուրն իրեն պատճառված կորուստն անընդունելի համարելով՝ նաև՝ հետագայում իր և այլոց համար նույնը բացառելու նպատակով, սկսի ծավալել ոչ թե վրիժառության, այլ՝ պատվախնդրության համընդհանուր դատական գործընթաց՝ ճշմարտությունը բարձրաձայնելու և իրերն իրենց անուկ կոչելու միջոցով օրինազանցներին վնասագերծելու համար: Հարգելի հայրենակիցներ, շատերիդ նման, ես նույնպես անկեղծորեն հիացած եմ ՀՀ սահմանադրության 3-րդ հոդվածով, որը հռչակում է՝ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»: Մինևույն ժամանակ՝ ցավ եմ զգում, որ համամարդկային այս վեհ գաղափարը մեր պետության սահմանադրությունում ամրագրելը ոչ թե իրագործման երաշխիք է, այլ՝ ընդամենը տիեզերական հեռուներում թափառող բաղձալի երազ: Այդուհանդերձ, չմոռանանք նաև, որ ՀՀ Սահմանադրությունում ամրագրված է՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք» (18-րդ հոդված): Փաստենք նաև, որ՝ մեր իրավունքները ոտնահարող և արդարադատությունը բռնաբարող չարագործներին անարգանքի սյունին գամելով՝ մեր պաշտպանության համար անհրաժեշտ վտանգագերծ գոտիներ ստեղծելը ոչ մի օրենքով արգելված չէ: Այսպիսով. այլընտրանք չունենալու պարագայում՝ մենք պարտավոր ենք՝ Հանուն արդարության ու պատվախնդրության՝ առանց վարանելու, առանց երկմտելու՝ դատապարտել և արարքի ծանրության աստիճանին համաչափ պատժել բոլոր այն անօրեններին, ովքեր, գիտակցելով հանդերձ իրենց արարքի հանցավոր էությունը՝ այնուամենայնիվ, պատվիրել, հեղինակել կամ «օրինականացրել» են մեր իրավունքները ոտնահարող և մեր արժանապատվությունը վիրավորող դատական ակտերը: Պատվախնդրությունից չզրկված ՀՀ քաղաքացի՝ ԳԵՎՈՐԳ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ԵՐԼԱՆ, 14.10.2013 թ.

Նախորդ նորությունը: Հիվանդ ՄԱՐՄԻՆ

Հաջորդ նորությունը: «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԵԽԱՆԻՉՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՍՏՈՒՄԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ և ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Առաջարկվող նորություններ



26.01.2017ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԽԱՋ ԿՈՐՅՈՒՆ
ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՆԿԱՏԱՄԲ
ՀԱՐՈՒՑՎԵԼ Է
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՎԱՐՈՒՅԹ



22.03.2017ՓԱՍՏԱԲԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ
ՆԿԱՏԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼԸ
ՄԵՐԺՎԵԼ Է

Վերադառնալ `$(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })`